

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՋՄԻ ԲԱՐՔԱՌՈՒՄ

Ողմը («Հուգէ՛մ») Արեւմտեան Հայաստանի հնադուր զուգերից է։ Այդ տեղանունն առաջին անգամ հիշատակում է Մովսէս Խորենացին իր «Հայոց պատմութիւն» աշխատութեան երկրորդ գրքի Լէ գլխում, երբ խոսում է Երվանդի կողմից Սանատրուկի որդիներին կոտորելու և մանուկ Արտաշեսի ազատվելու մասին։ Նա գրում է. «Եւ քանզի այր քաջ էր Սմբատ և ծանօթ հառաջագոյն, պատուի մեծապէս ընդ զօրագլուխսն Պարսից, որպես և մանուկն ընդ որդիս թագաւորին, տեղի բնակելոյ առեալ զԲատ և զՈղմն կոչեցեալ գաւառս»։

Ողմ գյուղը մի ժամանակ եղել է Մոկսի կազմում։

Բաղրիսան բեկը ամուսնանալով Մոկսի աղաներից մեկի աղջկա հետ, վերջինից, որպես նվեր, ստանում է այդ գյուղը։ Հետագայում Բաղրիսան բեկի վրա է հարձակվում Օսման փաշան. պարտութեան մատնելով նրան, խլում է Ողմ գյուղը։ Այնուհետև վերջինս մտնում է Բաղեշի նահանգի Բարվարի շրջանի մեջ՝ խսխեր կենտրոնով։ Ողմն ունի անմատչելի դիրք, շրջապատված է սարերով, որոնց վրա կառուցված են ամուր բերդեր՝ «Մը՛րաժըղո», «Գումուռ», «ԱմըրՕվա», «Խըլճընց», «Սանաշու»։

Հիշյալ գյուղը հնուց ի վեր պատկանել է Սմբատ իշխանին, որի անունով հիշվում է «Սըմբը՛տա» բերդը¹։

Ողմը եղել է մեծ գյուղ՝ մոտ 150 տնտեսութեամբ², ուր այժմ բնակվում է 6 հայ ընտանիք։ Մինչև հայկական մեծ եղեռնը Ողմ գյուղին տիրում էին Տահր և Մահմուդ աղաները։

Այդ գյուղի հարևաններն են Շատախը, Մոկսը, Մամրտանքը, իսկ վերջինիս՝ Սպարկերտը։ Ողմին մոտիկ գտնվող հայաբնակ գյուղերն են Հակուկ, Կուչողս, Դաշտուկ, Արմշատ, Գոմանից, Բանիջան, Մալըկ, Ալկեֆ, Հավլանց, որոնցից Գոմանից ու Կուչողս գյուղերը պատկանում են Մոկսին, Արմշատը՝ Շատախին, իսկ մյուսները՝ Բարվարին։ Կային ուրիշ գյուղեր ևս, որոնք քրդաբնակ ու ասորաբնակ էին։ Ողմից 5 կմ հեռավորութեան վրա գտնվում է Շակմերի գյուղը՝ Սիմ և Դաշտ մասերով, որի բնակիչները (7 տուն) վաղուց տեղափոխված էին Ողմից, խոսում էին նույն բարբառով։

¹ Այս անունը պատահականորեն չի կապվում հիշյալ բերդի հետ, վերջինս ունի իր պատմական հիմքը։ Սմբատը հիշվում է որպես Մոկաց իշխան, որը գործել է Թ ղարում (տե՛ս Զ. Աճառյան, Հայոց անձնանունների քառարան, հատ. Դ, 1948, էջ 545—546)։

² Բնակիչների թվի վերաբերյալ որոշակի տվյալներ չունենալով՝ ընդհանուր շնչերի թիվը չենք բերում։ Պետք է նկատել, սակայն, որ տնտեսութիւնների մեծ մասին ունեցել է 25—30 շունչ. այսպես՝ միայն Բոժկանց ու Քուվունց Պետրոսի տներում շնչերի թիվը 50 էր, իսկ Ավդիշունց Հովանինը՝ 30։

Ողմն իր հարեանների հետ կապվում էր հետևյալ ճանապարհներով: Կոփեր «Կ'ըփիր» անտառամասով՝ Շատախին, Գոմանից-Գղավա-Հարղու-Հաղին գյուղերով՝ Մոկս գյուղաքաղաքին: Հակուկ գյուղից ճանապարհը ձգվում էր երկու ուղղությամբ, որոնցից մեկը Վանքերի սարով անցնում էր Մամրտանք, ապա՝ Սպարկերտ, իսկ մյուսը Բեղար-Ատավ-Հավլանց գյուղերով՝ Խսխեր:

Ողմեցիք կապվում էին Զիզրեի հետ, այստեղ հասնում լաստանավերով և կատարում իրենց առևտուրը:

Ողբերգական է եղել ողմեցու անցյալը: Գտնվելով թուրքական բռնապետության դաժան լծի տակ՝ Ողմը մյուս հայաբնակ գյուղերի նման բազմիցս ենթարկվում էր ավարառությունների ու կողոպուտի: Տահր և Մահմուդ աղաները բնակիչներին ստիպում էին վճարել նույնիսկ իրենց կրած հագուստների համար: Զբաղարարվելով ամենօրյա թալանով՝ նրանք զինված ներխուժում էին տները, կապկապում գյուղացիներին, հեռացնում գյուղից և մեծ փրկագին պահանջելուց հետո միայն արձակում նրանց: Անպաշտպան գյուղացիներին ուղեկցում էին մեկը մյուսից զարհուրելի խոշտանգումները: Նրանք լքելով իրենց բնակատեղին, մերթ ապաստան են գտնում Մամրտանքի Հարատ, Շնաղբյուր, Կառնա, Մութ և ուրիշ գյուղերում, մերթ ծվարում Մոկս գյուղաքաղաքի Անձղոնց թաղում, ուր, հակառակ իր արյունոտ եղբայր Նուրի բեկի, նրանց պաշտպանության համար հոգում է Մուրթուլա բեկը:

Բռնակալների վայրագությունները երբեք չեն ընկճում ողմեցիների ազատատենչ ոգին: Նրանց արիությունը վկայող բազմաթիվ հերոսական դրվագներ են հյուսվել, որոնց կենտրոնական դեմքն էր Ռաշոնց Լաթոն (Միհրան):

Լաթոն անզուսպ ցասումով է լցվում, երբ Զամիլ աղան, օգտվելով հայրենադավ Պլուզկանց Սարգսի աջակցությունից, մեկ օրում ողմեցի հայրենասեր Շերոնց Բոզոյին և նրա զինակիցներից երեքին հրկիզում է գոմում, իսկ հինգին գնդակահարում:

Լաթոյի անվան հետ են կապված թե՛ իր հայրենի Ողմի և թե՛ Սպարկերտի, Մամրտանքի շրջանների գյուղերի բնակչության պաշտպանության ու փրկության համար կատարած անօրինակ սխրագործությունները:

1915 թ. իրենց հրոսակների գլուխն անցած՝ Մահմուդ, Ռաշիդ, Բահրամ, Արըֆ աղաները հարձակվում են Ողմում մնացած անզեն ու անպաշտպան բնակիչների վրա և սկսում արյունալի ջարդը: Փրկվում են քչերը...

Թուրքական յաթաղանից ազատված ողմեցիների մի շնչին մասը բնակություն է հաստատել Երևանում, Նորքում, Արտաշատի, Աշտարակի, Կամոյի շրջաններում, Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքում:

Ողմի բարբառի ուսումնասիրությունն անհետաձգելի է դառնում նրանով, որ վերջինիս կրողներից շատերն արդեն մահացած են, մնում են հատուկ ենտ մեծահասակներ, նոր սերունդն էլ անհրաժեշտության դեպքում միայն կարող է այդ բարբառով դորձածել որոշ բառեր և ոճեր:

Այս հոգվածով համառոտակի տալիս ենք Ողմի բարբառի ձայնավորների փոփոխությունները³:

³ Ողմի բարբառը զրի առնելու դործում հատկապես մեծ շահագրգռություն են ցուցաբերել Լասմիկ Շահենի Շահինյանը (76 տար.), Թարոս-Թաջիկ Զադոյի Պետրոսյանը (73 տար.), որոնք սիրահոժար հանձն առնելով ամեն մի դժվարություն՝ ուղեկցել են ինձ իրենց ծանոթ քուրդ ողմեցիների տները: Սակայն առանց Վահան-Խոխա Խաչոյի Բոզոյանի բարեկամությունն

1. Հին հայերենի ա ձայնավորը մեկ, մեկուկես, երկվանկ ու եռավանկ բառերի սկզբում մնում է ա. ինչպես՝ աղ>աղ, ազգ>ասկ, ակն>ակ, անուն>անուն, արդար>արտըար, արագիլ>առակ'ըլ, ապաւեն>ապավըն և այլն:

Բացառություն են կազմում անկանիլ>ընգ'ընիլ, ընկնաւոր>ընգ'ընա'ր, անցանիլ>ընցնիլ բառերը, որոնց մեջ ն ձայնորդից առաջ ա-ն դարձել է ո:

Ամեն(այն) թողոր՝ բառը գործածվում է թե՛ ամբէն, թե՛ քմբէն ձևերով: Ասել>սա'(հր. եղ.) բառի մեջ ա-ն լինել է:

2. Հին հայերենի պ, կ, տ, ծ, փ բաղաձայններին հաջորդող ա-ն նախավանկում մնում է անփոփոխ⁵: Բաղամաթիվ օրինակներից բերենք մի քանիսը. պատ>պատ, կացին>կացէ', տաղ>տաղ Վերգ' նվիրված հերոս անձ-նավորություններին, ծառ>ծառ, ճանկ>ճանկ' և այլն:

3. Ա-ն մնում է անփոփոխ մ, ն ձայնորդներից, փ, ց շնչեղ խուլներից և ս, ի խուլ շփականներից հետո. ինչպես՝ մանգաղ>մանգ'աղ, նախիր>նախէ'ր, փախչիլ>փախնիլ, ցաւ>ցավ, սաւան>սավան, խաղալ>խաղալ և այլն:

Խաւիծ բառը փոխարինվել է քրդերեն պընուկ ձևով:

4. Բառասկզբում հ>խ փոփոխությունը ենթարկվող բառերում խ-ին անմիջապես հաջորդող ա-ն մնում է անփոփոխ. ալսպես՝ հաւ>խավ, հաց>խաց, հանգ>խանք' շշուշ, հատանիլ>խատընիլ, համարել>խամբըրիլ և այլն:

Բացառություն է կազմում համբարծում>խամբառծըմ բառը, որի մեջ ա-ն դարձել է ա՝ մը-ից հետո լինելու պատճառով:

Հանելուկ բառի դիմաց ունենք կը'րկը'ր ձևը, իսկ հանել մնում է խանիլ:

Հաւատալ չորս վանկանի բառում հ>խ-ի և ա-ի սղմամբ ստացվել է հեշտ արտառանելի երկվանկ ավտալ՝ ձևը:

5. Հին հայերենի բ, գ, դ, ձ, ջ ձայնեղ պալթական բաղաձայնները Ողմի բարբառում դարձել են խուլ՝ պ, կ (քմալնացած՝ կ', գ'), տ, ծ, փ, որոնց հաջորդող ա-ն ա-ի է վերածվել ըստ Հ. Աճառյանի օրենքի. ալսպես՝ բարւ>պըւրիվ, գառն>կ'առ, դանգատ>կ'անգ'ատ, դադարել>տաւտըրիլ Վսպա-սել, ձագ>ծաք', ջրաղաց>ճաղաց և այլն:

Վերոհիշյալ օրենքից շեղվում են գրական փոխառություններ համարվող բարդի>բառդէ', դարբին>դարպըն, դարբնոց>դարպընուց բառերը, որոնց առաջին վանկում բ, դ ձայնեղ հնչյուններին հաջորդող ա-ն դարձել է ա:

Բամբասել>պըմբասիլ, համբարծում>խամբառծըմ, բարեկենդան>պըարկընպանք', բանջար>պըանջար բառերի հաջորդ վանկերում բ, դ, ջ

ու վստահությունը վայելելու, չլի կարող գտնել ամենուր ցրված ողմեցիներին, Եթե չլինեք նաև նաբգիգ Մուրադի Լարոյանը (83 տար.), անհետ կկորչեին ողմեցիների բանահյուսության նմուշները: Ուսումնասիրության ընթացքում ինձ ամեն կերպ ընդառաջել են Գեղամ Մանուկյանը, Սահակ Լարոյանը, Գառնիկ Պետրոսյանը, Համազասպ և Վահրամ Շահինյանները: Բոլորին սրտանց հայտնում եմ խորին շնորհակալությունս:

4 Ամեն(այն), առձակել բառերը Հ. Աճառյանի «Քննություն վանի բարբառի» աշխատու-թյանը կցված բառարանում ունեն «համմէն» (էջ 224), «ըրցկիլ» (էջ 248) ձևերը, որոնք սխալ են:

5 Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն վանի բարբառի, 1952, էջ 18—19:

հնչյունները չեն խլացել մ, ն ռնգալիներին հետո լինելու պատճառով, չնայած դրանցից հետո առկա է ա>ա փոփոխությունը:

6. Ձայնավորների ներդաշնակության օրենքով ա-ն դարձել է ա հետևյալ բառերում. չաբաթ>չապըաթ, դանգակ>դանգակ, քակոռ>քակըոռ, դա-ւազան>կ'ավըազան, ալոջ>ալուջ ճերկու տարեկան էդ ուլ», քարշել>ք'էլի:

7. Ա-ն դառնում է ա, ըստ նաև հետևյալ դեպքերում.

ա) Ձայնեղ շիական վ բաղաձայնից հետո՝ առաջին վանկում. վաղ>վըաղ, վանք>վանք', վարել>վըարել', վառել>վըառել', վարդ>վըառթ, վառեակ>վըառիկ և այլն:

Վարագոյր բառը, որ դարձել է վերաք'օ || վերաք'օ", այս կանոնին չի ենթարկվում:

Բացառություն են կազմում ով>վավ հարցական դերանունը և վայելել>վայելիլ բառերը, որոնք զրական փոխառություններ են:

Բոլորովին հակառակ պատկեր են ներկայացնում վ-ից հետո եղած ա-նյւր երկրորդ և վերջին վանկերում, որոնք դառնում են մերթ ա, մերթ ա. հմտ. ձաւար>ծավար և ձուածեղ>ծըվազըէղ: Այդ հաստատվում է նաև վարդա-վառ>վըառտըվար բառով, որի առաջին վանկում վերոհիշյալ օրենքով ունենք ըա, իսկ վերջին վանկում՝ ա, երկուսն էլ վ բաղաձայնից հետո:

բ) Ժ, զ ձայնեղ բաղաձայններից հետո. ժժան>ժըժան, ժամ>ժամ, ժանդ>ժանգ', խիզար>խէ՛զար, գազան>կ'ազան⁶ և այլն:

Զուակ բառի դիմաց ունենք լան || յերէխա ձևը:

Աղիւս, աղքատ, արթուն, արլոր բառերը ջնջված են: Դրանք փոխա-րինվել են ք'արփէնչ, շէ՛վար, հաշիյար, դիկ փոխառյալ ձևերով:

Առատ բառի դիմաց ունենք շատ ձևը:

Ծանոթություն.—Ապսպարել չ. Աճառյանի բացատրությամբ նշանա-կում է «պասել», մինչդեռ վերջինս ունի նաեւ իմաստը՝ պըսպրիլ ձևով, ուր ա-ն փոխվել է ը-ի. օրինակ՝ Վուր է կըպըսպըրըս ըմ կ'ըտըէլ ճինչո՛ւ ևս նալում իմ գդալին»:

գ) Երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբին ավելացած հ բաղաձայնից և հ դարձած հին հայերենի յ-ից հետո. առու>հառօ, այստեղ>հաստա, առիք>հառէք', անագան>հանկ'ան, աւելորդ>հավըլուռթ և այլն: Նույնիսկ այն դեպքում, երբ որևէ հնչյունախումբ փոխվում է հ-ի, դրան հաջորդող ա-ն այս օրենքի համաձայն դառնում է քմայնացած ա. օրինակ՝ լէրը՝ հանք «արի գնանք» (հարկադր. տըհանք):

Ալեւոր բառի դիմաց ունենք փոխառյալ ըռէսպը՛ ձևը:

Աղանիլ>խալ'ընիլ բառի մեջ քմայնացած կ' բաղաձայնին նախորդող ա-ն մնացել է անփոփոխ:

⁶ Ա ձայնավորը քմային հնչում չունի մի շարք բառերի մեջ, սակայն չ. Աճառյանի բացատրականում (տես համապատասխան արմատների տակ) նույն բառերն ունեն ա. ինչ-պես՝ «մանգ'աղ (առաջին վանկում), դարմանալ, դ'աւնակ (երկրորդ վանկում), ընդհակառակն, բառեր էլ կան, որոնց մեջ ա-ն քմայնացած է, բայց դրանք ունեն ա. այսպես են. «ալուչ, հաղընաղ, հավիլ, հանգ'ան, հառիք', ձ'ախ, խէ՛զար» և այլն:

⁷ «Ըռատ» (-չատ-), ինչպես նաև «ողէս, ախր' -տտ, հալքօն» ձևերը, որոնք բերված են չ. Աճառյանի կազմած բացատրականում (էջ 243, 247, 248), Ողմի բարբառում դործածա-կան չեն:

8. Երկվանկ ու եռավանկ բառերի սկզբում ա-ն դառնում է յե. եղած օրինակներն են՝ աղանի >լէղվընէ⁸, ալիւր >լէլօ⁹ր, արմուկն >լէրմօնգ⁹, արտասուք >լէտըսօնք⁹ || լէոսօնք⁹, արեգակն >լէրկ'ակ⁹:

Անել (առնել) բառը գործածվում է երկու ձևով՝ յէնիլ և յանիլ. կից բառի ե առաջնային շարքի ձայնավորների նմանութեամբ ունենք՝ լէնիլ՝ հէվըն լէրավ (փոխառված քրդերենից, նշանակում է քախանձագին խնդրել, աղաչել), կից բառի թեթև ընկերաբարձային ձայնավորով՝ յանիլ՝ վրար յանինք և այլն:

Արի(ե'կ) բառն ունի թե' յարի և թե' յերը՝ ձևերը. կից բառի թեթև ա և առաջնային շարքի ե ձայնավորների նմանութեամբ՝ լէրը՝ հաստա «արի ալստեղ», լէրը՝ հանք, վէրէն վէ լարի Վրալով արի» և այլն:

9. Մի քանի բառերի շեշտված ու շեշտանախորդ վանկերում ա-ն դառնում է ըա. ինչպես՝ ամբար >ամբըար, արդար >արտրար, արջառ >աճըառ, բահ >պրախ, բակլալ >բըակլա, կարդալ >կառտըալ¹⁰, սուրբ Ատոմ >Սըրբըատոմ, Բաղդասար >Բըաղդէսար և այլն:

Մանրություն. — Մոկսի ղյուղերի խոսվածքներից շատերում ևս հանդիպում է ըա հնչյունը. ինչպես՝ եղէգն >լէղըաք⁹ (Գլթ.), ծաղարդար >ծաղառտըար (Հղն.), բաց >պըաց (Գնկ.) և այլն:

Շեշտված վանկերում ա-ն դարձել է ըա ուսերենից և քրդերենից փոխառված սալդըաղ «գինվոր», իաբըար «լուր, տեղեկություն» բառերի մեջ.

Առաջ >հառան և բաց պըաց բառերով է կազմված հառնըպըաց «տան պատուհան» նշանակությամբ բարդությունը, որի երկրորդ վանկում ա-ն սղվել է:

Դաւանանք բառն ունենք ատըավան ձևով (օրինակ՝ քօ ատըավան կըտըրվա):

Սարկաւաղ >սարկըվաք⁹, վարդավառ >վըառտըվար, աւետարան >ավտըրան բառերում ա-ն դարձել է ը:

11. Այս բոլորից դուրս նկատելի են նաև հետևյալ մասնավոր փոփոխությունները.

Ա > Է. — կարացի >կէրցա, Բաղդասար >Բըաղդէսար (նաև՝ Բըաղդօ):

Ա > Օ. — հասկանալ >խօսկանալ⁹, կարոտել >կօռտանալ⁹:

Անք բառի մեջ հ-ի հավելումով ունենք հօ՞նք «գիրկ», ուր ա-ն վերածվել է օ՞. երկրաբառի: Նույն բառով կազմված հանքըտակ բարդության մեջ ա-ն դառնում է ա ըստ § 7-ի Գ կետի:

⁸ Աղաւնի բառի մեջ, ըստ բառացանկի, չնայած ունենք ա > յէ փոփոխությունը, որ հիշտ է, սակայն «լէղունէ' կ» ձևը (էջ 243) Ողմի բարբառին հարադատ չէ. ժողովրդական երգն էլ հաստատում է յլղվընէ⁸ ձևի ճշտությունը. օրինակ՝ Նարսիւր պուլնէր ք'անց յլղվընէն:

⁹ Վերջին երկու բառերի դիմաց Հ. Աճառյանի բառացանկում գտնում ենք «արտըսօնք⁹, արեղ'ակ || յէրդ'ակ» ձևերը (էջ 248): Լերեզակ բառի համար բերված երկու ձևերից վերջինն է գործածական՝ ո' > կ' փոփոխությամբ:

¹⁰ Հ. Աճառյանի կազմած բառացանկում (տես համապատասխան արմատների տակ) այս կարգի բառերի մեջ ա-ն ունի ա կամ ա հնչյունը, փոխանակ ըա. այսպես՝ ամբար, արթար, աճառ, րախ, րահլա, կարդալ և այլն:

Ընդ նախդիրի ըն և տը՛ր բառի էր հնչյունակապակցությունների սղմամբ, ապա ա>ըս փոփոխությունում ունենք դրանցից առնելն ընդ առաջ՝ ձևը, որի վերջավանկում կատարվել է ա>ի փոփոխությունը:

Ա>ի.—առաջեալ>հիրճիվ¹¹: Այս բառի վերջին վանկում եալ դարձել է իւ (հմմտ. սոալ >սո՛ւ), որը բարբառումս օրինաչափություն է, ապա լիա-կատար ներդաշնակությունում ա-ն փոխվել է ի ձայնավորի:

Ա>վօ.—աղօթարան>վօղթըրան, անեղնակ>վօղթրմակ թծիածան, որը խիստ փոփոխություն կրած մի ձև է:

Ա>ը՛.—կար>կը՛ր (կամ պակասավոր բալի անկատար ժամանակի եղ. թ. 3-րդ դեմք), տարգալ>կ՛ըտը՛¹²:

Ե

12. Մեկ, մեկուկես և երկուական բառերի սկզբում հին հայերենի ե ձայնավորը դառնում է ի. եղած օրինակներն են՝ ես>իս || ըս, եզն>իզ, եփել>>իփիլ, երեք>իրիք՛, ելանել>իլնիլ:

Այս օրենքից շեղվում է եղկ>լէխք՛, «զոլ» միավանկ բառը:

Ծանոթություն.—Հիշյալ բառերը նույն դիրքում ե>ի փոփոխությունն են ենթարկվել նաև Մոկսի գյուղերի խոսվածքներում՝ եզն>իզ, երեք>>իրիք՛, ես>իս (Առ., Սիպ., Գնկ., Դշտ. թ. և այլն):

13. Բառասկզբում ե-ն դառնում է է, երբ դրան նախորդում է ճ բաղա-ձայնը. ինչպես՝ երեկ>հէրէկ, երգումն>հէստօ՛ւմ, Երևան>Հէրվան (մեր մալրաքաղաքի անունը), երկալն>հէրկը՛ն և այլն:

Երեկոյ>հըրկօ՛ւն բառի մեջ ե-ն շեշտից առաջ դարձել է ը:

14. Գրաբարի անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դ. հավելադիր ե-ն դառնում է է կամ ի. օրինակ՝ ղնել-եղ>էտի, հանել-եհան>էխան, գալ-եկն>>իրի, բերել-բեր>իպի և այլն:

Լալ-ելաց բառի մեջ ե-ն ընկել է՝ լաց:

Նույն ժամանակում տալ բալի դիմաց ունենք օ>օ, ու, ինչպես նաև օ՝ փոփոխությունը ենթարկված կտ>օտօ, օտու, օտօ՛ւ՝ ձևերը, որոնցից առաջինի մեջ օ-ն ե-ի է վերածվել ըստ § 14-ի, ու-ն՝ օ-ի (տես § 57), ապա՝ վերջավանկի օ ձայնավորի ներդաշնակությունում ա-ն դարձել է օ. ինչպես և կօլ՝ օտու ձևում տվեց, ղէստօ՛ւր չօտօ թիրավունք, թուլլտվություն չտվեց, պըածէն օտու (օտօ, օտօ՛ւ) թրածին տվեց և այլն:

15. Բաղմավանկ բառերի սկզբի ե-ն (ո, ո, ր բաղաձայններից առաջ) դառնում է յե. ինչպես՝ ետալ>յէտալ, եղունգն>յէղօնղ՛, երաղ>յէրաղ և այլն:

Բացառություն է կազմում երթալ>աթթալ՝ (հարկադր. եղ. տըթաս) բառը, որի մեջ ե-ն դարձել է ա:

¹¹ Առաջեալ բառը Հ. Աճառյանի բառացանկում ունի «հէրլիվ» ձևը, որ սխալ է: Մոկսի գյուղերի խոսվածքներում ևս նույն բառը կրել է ա>ի փոփոխությունը, և ոչ՝ ա>է (Կլթ., Հղն., Նն., Առ., Մփց. և այլն):

¹² Հ. Աճառյանի մոտ՝ «գ՛լըգ՛էլ» (տես բառացանկը):

16. Միավանկ ու երկվանկ բառերում (փակ վանկ) Ե-ն դառնում է Ի. ինչպես՝ բեմ > պիմ, աներ > անիր, բերել > պիրիլ, զենուլ > զինիլ (հր. զէնա):

17. Անորոշ դերբայի ել վերջավորության դիմաց ունենք իլ. ինչպես՝ հերկել > խիրկիլ, բերել > պիրիլ, իջանել > իճնիլ (ձայնավորների ներդաշնակութամբ առաջացած), հասանել > խասնիլ, զանգատիլ > կ'անգ'ըտիլ՝ և այլն:

18. Գոյականների իր, նիր, քիբ, տիր, վիր հոգնակերտ մասնիկները ենթարկվում են Ե > ի փոփոխությանը. ինչպես՝ տըղէնիր, իզնիր, մարախք'իր, տ'անկըտիր, ընք'ըվիր «հոնքեր» և այլն:

19. Բառամիջում Ե > ի փոփոխությունն ունենք հետևյալ դեպքերում.

ա) Մի քանի երկվանկ բառերի բաց վանկում. փնթակ > փէթաք, հերու > խէրօ, հերիւն > խէրօն, հելեղ > խէղէղ և այլն:

բ) Մի քանի երկվանկ ու եռավանկ բառերի փակ վանկում. գոնհ > կ'ըռէխ «արյունախառն թարախ», խեղդել > խէխտիլ, հրեշտակ > խըրէշտակ և այլն:

գ) Կ'մալնացած կ', ք' բաղաձայններից հետո. զերան > կ'էրան, գերան-դի > կ'էրընդէ', քեր > ք'էռէ' և այլն:

20. Միավանկ, մեկուկես վանկանի և երկվանկ բառերի մեջ փակ վանկի Ե-ն դառնում է ը'. ինչպես՝ տեղ > տըէղ, ձեռք > ծըէռ, մեղր > մըէղր, բերան > պըէրան¹³, գմբեթ > քումըրէթ և այլն:

Վարդապետ > վարտըապըտ, վարժապետ > վարժապըտ բառերում տեղի են > ը' փոփոխությունը:

Նանդություն. — Ն-ն, ինչպես ցույց են տալիս օրինակները (§ 19—20), բառամիջում դառնում է Ե, ը', մասնավոր դեպքերում՝ ա, օ, օ, բայց ոչ՝ Ե (ի') կամ Ի' (տե՛ս Հ. Աճառյանի կազմած բառացանկը): Բացի դա, Ե > ը' փոփոխությունը նկատելի է նաև Մոկսի գլուղերի խոսվածքներում. օրինակ՝ տեղ > տըէղ (Հղն.), բերան > պըէրան, ձեռք > ծըէռ (Կլթ.), եղինջ > էղըէճ (Դշտ. թ.) և այլն:

21. Բաղմավանկ բառերի մեջ Ե-ն դառնում է ը կամ ընկնում է. այսպես. ուտելու > օտըլու, աւելորդ > հավընսուիթ, տարեկան > տարկան, խոսեցին > խուսցան և այլն:

Բարեկենդան բառը երկրորդ վանկի Ե-ի կորստով դարձել է պըարկըն-դանք': Նույն ձևն ունի նաև Մոկսի Հաղին գլուղի խոսվածքը:

Տվեց տարավ բառակապակցությունը դարձել է տըվըս տարավ, ուր երկրորդ վանկի Ե-ն փոխվել է ը-ի ձայնավորների ներդաշնակության օրենքով: Բարդության մեջ ունենք նույնպես ը՝ երեքմատ > ըրըք'մատ (կալի փայտյա դորժիք):

22. Կաննի > կաննաի, սերկիլ > սարկավիլ, հերիք > խարէք', ախտեղ > հաստա բառերի մեջ Ե-ն դարձել է ա կամ ա ձայնավորների ներդաշնակության օրենքով:

23. Այս բոլորից բացի Ե-ն ենթարկվել է հետևյալ մասնավոր փոփոխություններին.

Ե > օ. — լեղակ > լօղակ:

Ե > օ. — վերալ > վօր (մի):

¹³ Նման օրինակները Հ. Աճառյանի բառացանկում ունեն և (ի'), է՝ երկբարբառային հնչումը (տե՛ս համապատասխան արմատների տակ), ինչպես՝ «բիբել, խեղեղ, խեխտիլ, դերան, ձեռ, մեղր, բերան» և այլն:

ե>ա. — անթեղոց>անթարուց, հերիք>խարէք¹:

Է

24. Բառասկզբում ե-ն դառնում է յի հետևյալ երեք բառերում. էգ>
>լէք, էշ>լէշ, էլ>լէլ:

Բացառութիւն են կազմում էք>էք' (էական բալի ներկա ժամանակի հոգնակի թվի երկրորդ դեմքը), էի>է, էր>էր էիր>էր, էաք>էնք, էիք>էք', էին>էն (էական բալի անցյալ անկատարի բոլոր դեմքերը):

25. Միավանկ, երկվանկ բառերի մեջ ե-ն շեշտված վանկում դառնում է ը^է. այսպես. կէս>կը^էս, դէզ>տը^էզ, մէջ>մը^էջ, ձէթ>ծը^էթ¹⁴, տէր>տը^էր, աղէկ>աղը^էկ և այլն:

26. Այս բոլորից դուրս ե-ն կրել է հետևյալ մասնավոր փոփոխութիւնները.

ե>օ. — մողէս>մօղօզիկ:

ե>ու. — գաղպէն>գ'աղու¹⁵:

ե>ա. — թէ>թա:

ե>ի. — աղուէս>աղվիս:

Ը

27. Բառասկզբում ը-ն մնում է անփոփոխ միայն երկու բառում. ինչպես՝ ընկեր>ընգ'իր, ընտրել>ընդըրիլ:

Ընծա բառը ջնջված է, վերջինիս փոխարեն գործածվում է փոխառյալ փառօկ ձևը (քրդ., հօն. փառօկնիր):

Ընկոյզ>գ'ուզ բառը գործածվում է ընկույզի միջուկի իմաստով, ուր ըն հնչյունակապակցութիւնն ընկել է, յ-ն դարձել է գ': Ընկոյզ բառի փոխարեն (պտուղն ամբողջութեամբ) ունենք կօք'օվ ձևը:

Առաջին վանկի ըն հնչյունակապակցութիւնն ընկել է նաև ընդ որ>դուր, ընդ ունչ>դօնչ || դօ¹⁵նչ բառերում:

Սու, սպ հնչյունակապակցութիւններից առաջ ը է արտասանվում սպանել>ըսպանիլ, ստերջ>ըստը^էրճ, ստէծ>ըստը^էծ բառերի մեջ:

Սպիտակ, Ստեփանոս բառերը դարձել են սըվտակ, Սըվտեփանուս:

28. Դադտնավանկի ը-ն պահպանվում է հետևյալ ձևով.

ա) Նախավանկի առաջին բաղաձայնից հետո, երբ կան երկու, երեք բաղաձայններ. դմակ>տըմակ, խմոր>խըմուր, դրակից>տըրկը^էց, գղթոր>>գ'ըղթուր:

¹⁴ Հ. Աճառյանի բառացանկում կան բառեր, որոնց մեջ ե-ն դարձել է ա, է, երկբարբառային ե (ի^է), է'. այսպես՝ «դիեզ || դիէ'զ, մէչ, ձիթ» և այլն: Այս բառերում, ինչպես ցույց է տրված § 21-ում, է ձայնավորը փոխվում է ը^է, ը^է երկբարբառային ձայնաժարների, բայց ոչ՝ ե (ի^է), է'-ի:

¹⁵ Հ. Աճառյանի մոտ՝ «գ' աղպա» (տես բառացանկը, էջ 252):

բ) Բառասկզբում՝ երեք, չորս, հինգ բաղաձայն լինելու դեպքում ռ-ն ղրվում է առաջին և երկրորդ բաղաձայններից հետո. ձգտալ > սըկըռտալ՝, փոնգտալ > փըրընք՝ տալ՝:

դ) Բառամիջում՝ առաջին և երրորդ բաղաձայնից հետո, երբ կան չորս բաղաձայններ. երնջնակ > լէրընջընակ:

դ) Բառավերջում՝ երկրորդ բաղաձայնից հետո, երբ կան երեք բաղաձայններ. ծանր > ծանդրր, քազցր > ք՝ ախցըր:

29. Բառավերջի հավելվածական ն-ն և ղրան նախորդող ը-ն ընկնում են. ինչպես՝ ծունկն > ծոնգ՝, ձմեռն > ժըմը՝ ա, եղէգն > լէղը՝ ք՝ և այլն:

Մանրոթություն. — Ոտն > վօտ բառում վերջահանգ ն-ն և ղրանից առաջ սղված ը հնչյունը վերականգնվում են հոգնակի թվում, ինչպես նաև հոլովական ձևերում. օրինակ՝ վօտընօվ: Վերջինս հոգնակի թվով գործածվելիս դառնում է վօք՝ իր:

Տալ միավանկ բառի ղիմաց ունենք տալ՝ ում (հգն. տալ՝ վիր):

30. Ձայնավորների ներդաշնակության օրենքով զադտնականի ը-ն դառնում է ա, ա, ի, ու հետևյալ բառերում. կնգուղ > կանգ՝ օխ, հպարտ > խապառտ (հգն. խապառտք՝ իր), լղի > հաղը՝¹⁶, գրել > կ՝ իրիլ՝, դժուար > տիժվար, գմբեթ > քումբը՝ թ:

Ի

31. Բառասկզբում ի-ն դարձել է ե՛. ինչպես՝ ինն > է՛ն, Իլիկ > էլիկ բառի մեջ երկու ի-երից միայն վերջավանկինն է վերածվել ե՛ երկբարբառի, որի սղումով հոգնակի թվում ունենք Ելկըտրր ձևը, և բառասկզբի ի-ն, շեղվելով այս օրենքից, եղակիում դարձել է ե, հոգնակիում՝ ը:

Բառասկզբում հ-ի հավելադրումով ի-ն մնացել է անփոփոխ իմանալ > իմանալ բառի մեջ:

Ինձ բառի ին հնչյունակապակցությունը ջնջվել է, ձ բաղաձայնին միացել են ի, ը ձայնավորները, ստացվել են ձի, ձը ձևերը (անձնական դերանվան տրական, հայցական հոլովները):

Իրիցկին բառի փոխարեն ունենք տը՛քօխնի ձևը:

32. Բառամիջում միավանկ բառերի մեջ ի-ն մնացել է անփոփոխ. ինչպես՝ լինդ > լինդ՝, փիլոն > փիլոն՝ և այլն:

33. Ո՛ր քանի միավանկ ու երկվանկ բառերում ի-ն դառնում է ը՛ ինչպես՝ սիրտ > սը՛րտ, ծիրտ > ժը՛տտ, չիդ > ճը՛դ, գարշիլ > կ՛առշը՛լ, արագիլ > առակ՛ը՛լ, Դավիթ > Տավը՛կ, կարացի > կը՛րցա և այլն:

Մանրոթություն. — Նկատելի է, որ ի, ինչպես նաև ե, ե ձայնավորները ը՛-ի են վերածվում խուլ և ձայնորդ հնչյունների մոտ (տե՛ս նաև §§ 20, 25):

34. Երկվանկ բառերում ի ձայնավորը ք՝ քմայնից առաջ դառնում է ե. ինչպես՝ հերիք > խարէ՛ք՝, առիք > հառէ՛ք՝, կ՛արէ՛ք՝ զգարիներ՝:

35. Վերջավանկում ի-ն մնացել է անփոփոխ հետևյալ բառերի մեջ. սերկեիլ > սարկավիլ, մրչիմն > մըռճիմ, կաթիլ > կաթիլք՝:

¹⁶ Հ. Աճառյանի մոտ յղի բառը կա «ըղէ՛» ձևով, որ սխալ է (տե՛ս բառացանկը, էջ 281):

Ի-ն պահպանվում է նաև ըլ վերջավորությունն ունեցող բալերի մեջ՝ դադարել>տատըրիլ, թուանիլ>թըռնիլ, հաւանիլ>խաւնիլ, սովորել>սօվըրիլ' և այլն:

Մի քանի բալեր էլ ըլ վերջավորությունը դարձնում են ալ. ինչպես՝ ճանաչել>ճանչընալ, ծիծաղել>ծըծղալ, անաղանիլ>հունկ'անալ' և այլն:

36. Բազմավանկ բառերի մեջ ի-ն դառնում է ը. ինչպես՝ ճիպո>ճըպըռէլս, պատինջան>պատընջան, սիմինդր>սըմընդ'ըր Վաղացած ձավարի մանրութիւն և այլն:

Ունենք նաև անպիսի ձևեր, որոնց մեջ ի-ն բոլորովին ջնջվել է. ինչպես՝ սպիտակ>սըվտակ, սըվտկացի ա Վսպիտակել է՝, հերիսալ>խառսա և այլն:

Թաղիք>թաղէ'ս բառը հոգնակի թվում ստանալով Երբ հոգնակերտը, դառնում է լախք'ընիլ, ուր ի-ն ընկել է, ը-ի մոտ գտնվելու Գլատնառով ղ-ն դարձել է լս, ապա՝ ք-ից հետո ներմուծվել է ը ձայնավորը:

37. Երկվանկ ու բազմավանկ բառերի վերջին բաց վանկի ի-ն դառնում է ե'. ախպես՝ դարի>կ'արէ', որդի>ուռտէ', ջորի>ճարէ', խնամի>խընամէ' և այլն:

Վայրի բառը հոլովված ձևերում կրում է տարբեր փոփոխություններ. ախպես՝ վէրու քօշ (սեռ. հոլ.), վէրէ' (ուղղ. հոլ.):

Ծիծի բառի փոխարեն գործածական է ձըլծան ձևը:

Լի բառը կա լեկ, լեկն ձևերով (կրկնութիւն կազմված՝ լեկ-լեկ լըցէցէ'): 38. Որտեղացի լինելը ցույց տվող ցի մասնիկի ի ձայնավորը փոխվել է է' երկրարբառի. ախպես ողմեցի>Հուզմըցէ', մոկսեցի>մուկացէ' և այլն:

39. Ի>ե փոփոխությունը ենթարկվող այն բառերը, որոնք ստանում են և որոշիչ հոգը, ի-ն պահում են անփոփոխ, ինչպես՝ կ'արէն Վգարին, մաք'էն Վմաքին, ճուրէն Վջորին և այլն:

40. Ի>ե' փոփոխությունն են ենթարկվում նաև խոնարհված այն բալերը, որոնք բաց վանկում ունեն ի. ախպես՝ խանցէ' Վհանեցի, քա-ցէ' Վգնացի, պըռնըցէ' Վբոնեցի և այլն:

41. Սեռական հոլովի ի հոլովիչը շեշտի տակ դառնում է ը'. ինչպես՝ խըմուրը տաշտ Վխմորի տաշտ, խացը շուր Վհացի շոր և այլն:

42. Մեկ, մեկուկես, երկվանկ և բազմավանկ բառերի մեջ ի-ն վերջին վանկում (փակ վանկ) վերածվում է ե' երկրարբառի. ինչպես՝ հին>խէ'ն, միս>մէ'ս, չիւր>չէ'ր, տիկ>տէ'կ, գիրկն>կ'է'րկ, խորիս>խուրէ'ս, եր-դիք>հէրտէ'ս¹⁷ և այլն:

¹⁷ Հ. Աճառյանի մոտ այս բառերը վերջավանկի ի-ի փոխարեն ունեն լ', Մեզ հանդիսած բոլոր ոգմեցիներն էլ հիշյալ բառերի վերջավանկի ի-ն արտասանում են լ', Պեք է նկատել, որ բառացանկում նման բառերը նույն դիրքում ունեն կ' է, կ' ի, կ' լ'. ինչպես՝ Վարժըլէ, հէ'ղէ, բոփըվէրէ, կ'է'ընդէ, կ'է'նէ, բ'արի, զ'արէ', խնամէ' և այլն (անս Ողմի բառացանկի համապատասխան արձատնների տակ):

¹⁸ Այս կարգի բառերը Ողմի բառացանկում ունեն լ' երկրարբառ, սակայն հիշյալ երկրարբառն արտասանվում է է', Ողմին մոտիկ գտնվող Հակուկ, ինչպես նաև Մոկսի մի քանի գյուղերի խոսվածքներում էլ գործածական է լ' երկրարբառը. Օրինակներ՝ տիկ>տէ'կ, հինգ>խէ'նգ' (Կյթ.), վառեցին>վառըցէ'ն (Ուռ.), աղջիկ>ախջէ'կ (Ծփց.) և այլն:

Բացառութիւն է կազմում դարբին>դարալըն բառը (հգն. դարպընք'-տիր), որի մեջ ի-ն սլ-ից հետո վերածվել է ը՛ երկրարրառալին ձայնավորի (տե՛ս § 20-ում և-ի վերաբերլալ բերված օրինակները):

Գինձ բառը ջնջված է, վերջինիս փոխարեն գործածական է խամը՛մ ձևը:

43. Երկվանկ բառերի առաջին վանկում (բաց) ի-ն նույնպես դառնում է ե՛. օրինակ՝ իլիզար>խէ՛զար, ծիրսն>ծէ՛րան և այլն:

44. Այս բոլորից դուրս ի-ն ենթարկվել է նաև հետևյալ մասնավոր փոփոխութիւնը.

ի>ու.—կոծիծ>կուծուծ:

Ո

45. Բառասկզբի ո-ն դառնում է վօ. եղած օրինակներն են՝ որ>վօր, ոտն>վօտ, ողնի>վօղընէ՛, ողորմիլ>վօղըրմալ՛:

Բացառութիւն է կազմում ով>վա՛վ բառի ո>վա փոփոխութիւնը:

Ոջիլ>նէլ՛ բառում ն-ից առաջ ո-ն ընկել է:

46. Միավանկ ու բազմավանկ բառերի մեջ ո-ն դառնում է ու. ինչպես՝ խոտ>խուտ, ծոց>ծուց, մոմ>մում, հող>խուղ, թոռն>թուռ, խմոր>խըմուր, փոր>փուր, թոք>թուք՛ (կասկած չկա, որ կարող է շփոթվել թուք բառի հետ, քանի որ վերջինս դառնում է թօք՛ || թօ՛ք), ուղղորդ>աղուրթ, խոնջան>խունջան, խստոր>սըղտուր, պղտոր>պըղտուր, կոճակ>կուճակ, խաղող>խաղուղ, փողոց>փուղան, միւռոն>մըռուն, կորնգան>կուրընգ՛ան և այլն:

Բացառութիւն է կազմում թողուլ>քըխնիլ բառը, որի մեջ ո-ն դարձել է ը՛:

Բղուղ(կ) բառը ջնջված է, սրա փոխարեն գործածվում է պօտօկ || պօտօ՛կ ձևը:

Կթոց բառի դիմաց ունենք նուռիկ:

47. Բառասկզբի ո-ն ո դարձած ը ձայնորդից առաջ դառնում է ու. այսպես՝ որդն>ուռթ, որձ>ուռց, որդի>ուռտէ՛ և այլն:

48. Անառլանի օրենքի համաձայն բարբառումս խուլ դարձած և քմալնացած ձայնեղ բաղաձայններից հետո ո-ի դիմաց ունենք ու. ինչպես՝ բոկիկ>>պուպիկ, գոգ>կ՛ուք՛, դող>տուղ, սուրբ Դէորգ>Սըփկ՛ուք՛, ձոր>ծուր, ջոջ>ճուճ, գործ>կ՛ուռծ Վգործելը: Այլ իմաստ ունի գործ>կուռծ Վաշխատանք բառը, ուր ու-ն քմալին հնչում չունի:

49. Ո-ի դիմաց ու ունենք նաև մի քանի բառերում (ը, լ ձայնորդների մոտ). ինչպես՝ լոր>լուր, քորել>ք՛ուրիլ՛, փորձանք>փուրձանք՛, մոլորվել>մուլուրվիլ՛, հոգալ>խուկ՛ալ, ոլորել>ուլուրիլ՛ և այլն:

50. Զոքանչ>ղուք՛անչ, ալոջ>ալու՛չ, բորբոս>պուրպուս, բոլոր>պուլուր, ոսկր>ուսկուր, կոծիծ>կուծուծ, կոտոշ>կուտուշ (հգն. կուտըշք՛իւր),

կորկոտ>կուրկուտ բառերում ո>ու. ու փոփոխությունը կատարվել է ձայնավորների ներդաշնակության օրենքով:

51. Բազմավանկ բառերի ո-ն շեշտի տակ վեր է ածվում ա^ա, ա^ա երկբարբառների. ինչպես՝ թագաւոր>թակ'ա^ար, ուխտաւոր>հրխթա^ար, ճգնաւոր>ճըկնա^ար, մեղաւոր>մէղա^ար, շնորհաւոր>շընախա^ար և այլն:

52. Մի քանի բազմավանկ բառերում շեշտից առաջ ո-ն դառնում է ը կամ ընկնում է. ինչպես՝ քրոճալ>ուրըճալ', սովորել>սօվըրիլ', մոլորվել>մուլուրվիլ', բորբոքել>պուրպըք'իլ, *կողովով>կօղվօվ և այլն:

53. Միավանկ ու բազմավանկ բառերում ո-ն դառնում է օ, օ կամ ը^օ, ը^օ ա) Աճառյանի օրենքով են՝ ջոկ>ջօկ, բոլ>պը^օվ (հգն. պը^օվիր), բ) Վ-ից առաջ. սով>սօվ, կողով>կօղօվ, կոլ>կօվ (հգն. կօվիր), հով>խօվ: Այսպես նաև գործիական հոլովի վերջավորությունը լինում է օվ: գ) Բ-ից առաջ. շնորհք>շընօրք', Գէորգ>Կ'էվօրք':

դ) Լ, Ղ, Ն բաղաձայններից առաջ. կոր>կը^օռ «ձեռնափախու», քակոր>ք'ակը^օռ, ժողովել>ժօղվիլ, պողովաա>պօղպատ, (հգն. պօղպատք'իր) և այլն:

54. Առանց որևէ կանոնի ո-ն դառնում է ը^օ, օ կամ ը^օ, օ մի քանի բառերի մեջ. այսպես՝ արօտ>արը^օտ, ակօս>ակը^օց, ամօթ>ամը^օթ, արօր>խարը^օր, խոստանալ>խօստանալ', լաջողիլ>հաճօղիլ, լօթ>լօթ, տորոն>տօրօն || տօրօ^օն, տոկանք>տօկ'անք', ողողել>օղօղիլ, թոնիր>թօնը^օր և այլն:

Քարաթոթոշ, խռովիլ բառերը ջնջված են, սրանց փոխարեն գործածական են ըռըկիլ, ևռ'մնը'մ ձևերը:

*Չկարողացա>չըկերցա բառի մեջ ընկել է ողա հնչյունախումբը:

ՈՒ

55. Բառասկզբում միավանկ ու երկվանկ բառերի ու-ն դառնում է օ^օ կամ օ. ինչպես՝ ութ>օ^օթ, ուրախ>օ^օրախ, ուրագ>օ^օրաք' || օրաք', ուրբաթ>օ^օրպըաթ || օրպըաթ և այլն:

Ուրց, ուղտ բառերը ջնջվելով՝ փոխարինվել են ջաթըր, դըավա փոխառյալ ձևերով:

56. Մեկ, մեկուկես վանկանի և երկվանկ բառերի մեջ (փակ վանկ) ու-ն դառնում է երկբարբառալին օ^օ, օ^օ կամ օ, օ. ինչպես՝ ջուր>ճօ^օր || ճօր, դղում>տըտօ^օմ || տըտօմ, դուռն>տօ^օռ || տօռ, ձուկն>ժօ^օկ || ժօկ, նուռն>նօ^օռ || նօռ, թուղ>թօ^օղ || թօղ, ցողուն>ցըղօն և այլն:

Գռուզ բառը ձևափոխվելով դարձել է կըռընձկըտօկ, ուր նկատելի է ու>ը փոփոխությունը: Ավելի փոփոխված է նույն բառի կանձօկ ձևը:

Բացառություն են կաղմում անուն>անուն, Յիսուս>Հիսուս բառերը, որոնց մեջ ու-ն մնացել է անփոփոխ:

Գալուսա բառի դիմաց սա հնչյունակապակցության սղամաբ ունենք
Կ'ալօ:

Խանութ բառը շնչված է: Սրա դիմաց ունենք դօք'ան || դօ'ք'ան ձևը:
Արթուն, քուշ բառերի դիմաց ունենք հաշիյար, կը՞մ ձևերը:

57. Միավանկ, մեկուկես և երկվանկ բառերի բաց վանկի ու-ն առանց
բացառության դարձել է օ կամ օ՞՞. ինչպես՝ թթու > թըթօ, կծու > կըծօ,
երկու > լէրկօ, ձու > ծօ՞՞ || ծօ, լու > լօ (հգն. լըվիր, բցո. լըվից) և այլն:

58. Հին հայերենի անորոշ դերբայի ու վերջավորությունը դառնում է
իլ. ինչպես՝ խրտնուլ > խըռտընիլ, զենուլ > զինիլ և այլն:

59. Մասնավոր փոփոխություններ են.

Ու > է՛. — գաղտուկ > կ'աղտէ՛:

Ու > ա. — ուղղորդ > աղուրթ:

Ու > ք. — ուստաւոր > հըխթա՞ր:

Ու > ք՞. — բուրվառ > պէ՞՞ ուլըռ, բուռն > պէ՞՞ռ, բուրդ > պէ՞՞ռթ, պան-
ջըրպէ՞՞սիկ «բանջարբուսիկ» (բոլորն էլ պ բաղաձայնից հետո):

Տես Մանուկի ձևում ու-ն ընկել է՝ Տըսմանկու:

Ամփոփենք. Ողմի բարբառում ձայնավորների կրած փոփոխությունները
հետևյալ պատկերն են ներկայացնում: Հին հայերենի ա ձայնավորը մնում է
անփոփոխ կամ դառնում է ա: Երկվանկ ու եռավանկ բառերի սկզբում ա-ն
փոխվում է յե-ի, բաղմավանկ բառերի երկրորդ վանկում սղվում կամ դառ-
նում է ը, շեշտված ու շեշտանախորդ վանկերում երբեմն էլ վերածվում է
քա երկբարբառային ձայնավորի:

Ն ձայնավորը սովորաբար դառնում է ի, սակավ դեպքերում՝ ե, բաղ-
մավանկ բառերի սկզբում՝ յե (դ, ո, ր բաղաձայններից առաջ), միավանկ,
մեկուկես և երկվանկ բառերի փակ վանկում՝ ը՛, մասնավոր դեպքում՝ ը՛:
փոխվում է ը-ի կամ ընկնում է:

Է ձայնավորը բառասկզբում դառնում է յե, շեշտված վանկերում՝ ը՛:

Ը ձայնավորը, չհաշված մասնավոր դեպքերը, մնում է անփոփոխ կամ
ընկնում է:

Ի ձայնավորը մնում է անփոփոխ կամ շեշտված վանկերում դառնում է
ե, միավանկ ու երկվանկ բառերում՝ ը՛, բաղմավանկ բառերի մեջ՝ ը կամ
բոլորովին շնչվում է:

Ի՛ ձայնավորը անշեշտ ը-ի փոխվելուց բացի, դառնում է նաև շեշտված
ը՛ ի հոլովման պատկանող գոյականների սեռական հոլովում: Ի՛ ձայնավորը
երկբարբառային է՛ է դառնում շեշտված վանկերում:

Ո ձայնավորը բառասկզբում դառնում է վօ, երկվանկ բառերի շեշտված
ու շեշտանախորդ վանկերում սովորաբար՝ ու, իսկ ո, ր ձայնորդներից առաջ
և խուլ բաղաձայններից հետո՝ ու: Միավանկ ու բաղմավանկ բառերում ո ձայ-
նավորը դառնում է օ (վ, ր, ո, դ, ն բաղաձայններից առաջ), սակավ դեպ-
քերում՝ օ, ը՞, ը՞ (շեշտված վանկերում), բաղմավանկ բառերի շեշտված
վանկում վերածվում է ա՞, ա՞ երկբարբառների:

Ու ձայնավորը բառասկզբում սովորաբար դառնում է օ կամ երկբար-
բառային օ՞ (բաց վանկում), մեկ, մեկուկես վանկանի, երկվանկ բառերի փակ
վանկում՝ օ, օ կամ երկբարբառային օ՞, օ՞, բառավերջի բաց վանկում՝
նույնպես օ, օ կամ օ՞, սակավ դեպքերում՝ ի:

Ձայնավորների փոփոխությունները կատարվել են նաև Աճառյանի օրենքով: Ինչպես տեսնում ենք, Ողմի բարրառում, խուլ դարձած գրաբարի ձայնեղ պայթականներից հետո, ա ձայնավորից բացի, քմայնանում են նաև $n > ու$, $n > ու$, o , o^u ձայնավորները:

Ձայնավորների փոփոխությունները պայմանավորված են նաև Ողմի բարրառում լիակատար ու մասնակի ձևերով դրսևորվող ձայնավորների ներ-
դաշնակության օրենքով: